Հիմա մասամբ գիտեմ

Bookmark

Paul R. Ignatius

Now I Know in Part

Bookmark

Փոլ Ռ. Իգնեշիուս

Հիմա մասամբ գիտեմ

Թարգմանությունն անգլերենից՝
Դիանա Համբարձումյանի

new mag

ԵՐԵՎԱՆ
2019

Bookmark

ՀՏԴ 328:82-94
ԳՄԴ 67.401
Ի 196

Իգնեշիուս Փոլ Ռ.
Ի 196 Հիմա մասամբ գիտեմ/ Փոլ Ռ. Իգնեշիուս; Թարգմ.՝ Դ. Համբարձումյան.- Եր.: Newmag, 2019.- 480 էջ:

Այս բացառիկ ինքնակենսագրականը ներկայացնում է ԱՄՆ-ում ամենաբարձր պետական պաշտոնը զբաղեցրած ամերիկահայ պետական և ռազմական գործիչ Փոլ Իգնեշիուսի հուշերը: Նա պատմում է, թե ինչպես է իր ընտանիքը, փրկվելով Աբդուլ Համիդի սպանդից, հաստատվել Անգլիայում, ապա տեղափոխվել ԱՄՆ: Փոլ Իգնեշիուսն առանձնակի ջերմությամբ է հիշում իր մանկության և պատանեկության տարիները, երբ Գլենդելի իրենց տուն էին այցելում Վիլյամ Սարոյանը, Ռուբեն Մամուլյանը:

Փոլ Իգնեշիուսը պատմում է նաև Հարվարդում սովորելու, Երկրորդ համաշխարհային պատերազմին մասնակցելու և ԱՄՆ կառավարությունում աշխատելու մասին: Ի վերջո, հեղինակը նկարագրում է այն պատմական ուղևորությունը, որի ընթացքում այցելել է Արևմտյան Հայաստան և Երևան:

Հայերեն թարգմանության համար գրքում հատուկ նախաբան են գրել Փոլ Իգնեշիուսի զավակները՝ Դեյվիդ, Սառա, Էմի և Ադի Իգնեշիուսները:

ՀՏԴ 328:82-94
ԳՄԴ 67.401

ISBN 978-9939-9217-1-6
Հիմա մասամբ գիտեմ © 2019, «Նյու Մեգ» ՍՊԸ
Now, I Know in Part © 2000 by Paul R. Ignatius
Հեղինակի լուսանկարը՝ US Naval Institute
Շապիկի նկարազարդումը՝ Keith Tarrier-ի
Դեյվիդ, Սառա, Էմի և Ադի Իգնեշիուսների լուսանկարները՝ անձնական արխիվից

Գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել «ԱՐԻ» գրական գործակալության միջոցով:

ԳԻՐՔԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է
«ԱՎՐՈՐԱ»
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ
ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ

AURORA
HUMANITARIAN INITIATIVE

AURORAPRIZE.COM

Bookmark

Ինչու կարդալ մեր հայրիկի գիրքը

Որպես Փոլ Իգնեշիուսի 4 զավակներ, ուրախ ենք հայ ընթերցողին ներկայացնել մեր հոր հրաշալի հուշագրությունը: Հույս ունենք, որ նրա բազմաթիվ ձեռքբերումներն ու մասնագիտական նվաճումները ոչ միայն հայերին կստիպեն հպարտանալ և ոգեշնչվել, այլև ուրիշ ժողովուրդների: Վերնագիրը, որ մեր հայրն ընտրել է այս գրքի համար՝ «Հիմա մասամբ գիտեմ», վկայում է նրա եզակի համեստության և իրեն Ամերիկայի մեծ պատմության ընդամենը մի փոքրիկ մասնիկը համարելու մասին: Մեծ պատմություն, որի հերոսներն իր պես ներգաղթյալների ընտանիքներն են. նրանց ճակատագրերը ջրի երես են դուրս գալիս անկանխատեսելի, երբեմն առեղծվածային ձևով:

Մեր հայրը մեծացել է Գլենդելում, որը դեռ չէր դարձել այն քաղաքը, որտեղ հիմա Հայաստանից դուրս ամենամեծ թվով հայերն են ապրում: Նրա պապը՝ Ավետիս Մաթեոս Ժամկոչյանը, առաջիններից մեկը հաստատվեց այնտեղ: Թրոփիկոյում նրա գնած հողատարածքը հետագայում դարձավ Գլենդելի մաս: Այնտեղ նա մեծ տուն կառուցեց, որը նաև թենիսի կորտ ուներ: Ավետիսն այնտեղ բարեկեցիկ ապրեց իր կնոջ և 6 երեխաների հետ, որոնցից Էլիզան հետագայում դարձավ Փոլի մայրը:

Այս գրքում Փոլը պատմում է, թե ինչպես է իր պապը 1892 թվականին հեռացել պատմական Հայաստանից: Ավետիսը ավարտեց Եփրատի քոլեջը Խարբերդում, որտեղ և մնաց ու սկսեց դասավանդել, բանաստեղծություններ գրել և անգլերենից հայերեն թարգմանություններ անել: Ավարտելուց հետո վերադարձավ իր հայրենի քաղաք Ակն, որտեղ շարունակեց տեքստիլի ներմուծման ընտանեկան բիզնեսը: Թուրքական իշխանությունը նրան ձերբակալեց: Նրա մոտ հայտնաբերել էին պետության համար վտանգավոր հոդվածներ և բանաստեղծություններ, որոնցում կային «ազատություն» ու «ազատագրում» բառերը: Ավետիսի հորեղբայրը կաշառեց թուրք պաշտոնյաներին, և Ավետիսին ազատ արձակեցին: Ընտանիքը կազմակերպեց նրա փախուստն Անգլիայի Մանչեստր քաղաք: Այստեղ Ավետիսը հիմնեց մի ընկերություն, որն անգլիական գործարանների արտադրանքն արտահանում էր Մերձավոր Արևելք: Մանչեստրում նրա ընտանիքը վերամիավորվեց: Ապրում էին մշակութային կյանքով, խոսում անթերի անգլերեն և ակտիվ մասնակցում հայ համայնքի անցուդարձին: Ընդամենը մեկ տարի անց, երբ Եգիպտոսում հիմնադրվեց Հայ բարեգործական ընդհանուր միությունը, Ավետիսը մի քանի հայերի հետ Մանչեստրում հիմնեց ՀԲԸՄ եվրոպական առաջին մասնաճյուղը:

Անգլիայի խոնավ եղանակից ձեռք բերած հիվանդության պատճառով Ավետիսը 1911-ին ընտանիքով տեղափոխվեց Հարավային Կալիֆոռնիա: Այնտեղ ապրեց խաղաղ ու բարեկեցիկ կյանքով, սակայն նրան հանգիստ չէր տալիս իր հեռանալուց հետո Ակնում տեղի ունեցած ողբերգությունը: 1895-1896 թվականներին սուլթան Աբդուլ Համիդի կազմակերպած

կոտորածների զոհ դարձան Ավետիսի եղբայրը, հորեղբայրը և հորեղբոր բոլոր որդիները:

Փոլի հայրը՝ Հովսեփը, Ամերիկա էր եկել 19 տարեկանում, 1904 թվականին: Նյու Յորքի Էլիս կղզում գտնվող ներգաղթյալների գրասենյակի միջոցով նա եկել էր իր ավագ եղբայր Առաքելի կնոջ և նրանց որդու՝ Ջորջի հետ:

Հովսեփը բնակություն հաստատեց Լոս Անջելեսում և դարձավ տեղի հայ համայնքի ազդեցիկ դեմքերից մեկը: Նա իր կնոջ հետ հավաքույթներ էր կազմակերպում, հրավիրում ազդեցիկ գրողների ու օպերային երգիչների: Նրանք հավաքույթներ են կազմակերպել երիտասարդ Վիլյամ Սարոյանի համար և լավ հարաբերություններ պահպանել անընդհատ մեծացող ընտանիքի ներսում և ընկերների հետ: Այդ ամենը կա գրքում: Արամ Սարոյանը՝ Վիլյամ Սարոյանի հորեղբայրը, Հովսեփի լավագույն ընկերն էր, Իգնեշիուսների տան բազմաթիվ այցելուներից մեկը: Մեր հայրը փոքր դերեր է ունեցել կինոռեժիսոր Ռուբեն Մամուլյանի մի քանի ֆիլմում:

Հովսեփն ու Էլիզան նվիրվել էին արվեստին և ընտանիքի մյուս անդամների ու ընկերների հետ օգնեցին հիմնել Հարավային Կալիֆոռնիայի «Հայկական միացյալ արվեստների միությունը»: Հովսեփը նաև աջակցում էր Հայագիտական ուսմանց և հետազոտությունների ազգային ընկերակցությանը: 1950-ականներին նա օգնեց դրամահավաք կազմակերպել Հարվարդի համալսարանում Հայագիտության ամբիոն ստեղծելու համար: Ավելի ուշ ՀՈՒՀԱԸ-ն հովանավորեց Փոլի և նրա երկու երեխաների (Սառայի և Ադիի) 2006 թվականի շրջագայությունը դեպի Հայաստանի Հանրապետություն և

պատմական Հայաստանի քաղաքներ: Այս ամենի մասին կա գրքում: Սառան հիմա աշխատում է ՀՈՒՀԱԸ-ում, նրա որդի Ջոելը վերապատրաստում է անցել կազմակերպությունում՝ պահպանելով ՀՈՒՀԱԸ-ի հետ 4 սերնդի չընդհատվող կապը:

Հովսեփը երբեք չէր կասկածել, որ իր երեք երեխաները՝ Փոլը, Հելենը և Ջոն, հաջողության կհասնեն Ամերիկայում՝ ազատվելով ընտանիքի դառը անցյալից, չմոռանալով հայոց պատմությունն ու մշակույթը: Փոլը գրում է. «Ծնողներս ուզում էին, որ իրենց ընտրած նոր երկրում ապրելու իմ տեղը գըտնեի: Միևնույն ժամանակ ցանկանում էին, որ չմոռանայի, թե որտեղից են եկել»: Նրանք Փոլին փոխանցել են իրենց արժեքները, անձնական պատմությունները և նվիրվածությունը հայկական ժառանգությանը: Այս գիրքը գրելով՝ Փոլը նույնն արել է իր զավակների ու թոռների համար:

Այս անկեղծ հուշագրությամբ Փոլը ներկայացնում է սերունդների հերթափոխը: Նա գրում է, օրինակ, իր մոր «Բեքստին» դաշնամուրի մասին, որն Անգլիայից տարան Ամերիկա, որովհետև ընկերներն ասել էին. «Նման բան այսօր Կալիֆոռնիայում հաստատ չեք գտնի»: Այդ դաշնամուրն այժմ Փոլի որդի Դեյվիդի հյուրասենյակում է: Փոլը գրում է. «Նրա (Դեյվիդի) դուստր Էլիզան նստում է Էլիզա մորս դաշնամուրի աթոռակին, որ նվագի ու պատրաստվի իր համերգին... Դաշնամուրին դրված է մորս լուսանկարը: Մայրս նկարում նստած է նույն աթոռին և նվագում է նույն դաշնամուրը: Թվում է, թե երկու Էլիզաներն էլ՝ և՛ նկարինը, և՛ թոռնուհին, նստած են այդ դաշնամուրի առաջ, նույն աթոռակին ու ապրում են երաժըշտության հանդեպ նույն սիրով»:

Մեր հոր երիտասարդ տարիները լի են եղել ընտանեկան

ջերմությամբ ու ընկերներով: Նա նկարագրում է այն երանելի, պարզ ժամանակները՝ «ծիրաններով ճակատամարտը», ճայթուկներով թենիս խաղալը և ճոխ կիրակիներին շիշ-քեբաբ պատրաստելը: Նա վերհիշում է իր խիստ ոճով հագնվող պապին՝ օսլայած օձիքով, և իր խստապահանջ տատիկին, որը միշտ սև էր հագնում: Նա սիրով ներկայացնում է իր ստեղծագործ, նվիրյալ և չափազանց սկզբունքային մորը, նրա ըմբոստացումը Բուրական պատերազմի ժամանակ, և թե ինչպես էր նա իրենց կյանքը լցնում արվեստով, երաժշտությամբ ու միասին լինելու ուրախությամբ: Հպարտությամբ ներկայացնում է իր հորը, որի սկզբունքայնությունն ու ինտելեկտուալ մակարդակը փոխանցվեցին իր երեք նպատակասլաց զավակներին: Եղբոր՝ Ջոյի, քրոջ՝ Միգսի հետ Փոլի ունեցած արկածներն ապացույցն են այդ սիրո ու հիացմունքի:

Գլենդելի դպրոցում, ապա Հարավային Կալիֆոռնիայի համալսարանում սովորելու տարիները, համալսարանը թողնելու դասերն ու որպես ինժեներ, ապա չստացված սցենարիստ աշխատելը և Երկրորդ աշխարհամարտի ժամանակ ԱՄՆ ռազմածովային ուժերի լեյտենանտ դառնալու պատմությունը նա ներկայացնում է հումորով, ինքնաքննադատությամբ և զսպվածությամբ, որ այնքան բնորոշ է ամերիկյան «լավագույն սերնդին», որին պատկանում է նաև մեր հայրը:

Փոլը քաջաբար կռվել է Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Մեզ հաճախ պատմում էր, որ երիտասարդ ռազմածովային սպա է եղել պատերազմի տարիներին և հենց այդ ժամանակ է բացահայտել իր ընդունակությունները: 1943-ին նա պայծառ երիտասարդ էր, երբ որպես հրետանու սպա գնաց պատերազմ: Տուն վերադարձավ որպես

վստահ, պատերազմում կոփված վետերան: Նա սկզբից էլ ուզում էր ռազմածովային դառնալ, սակայն ինժեներական բավարար գիտելիք չունենալու պատճառով նավատորմից մերժում ստացավ: Դիմեց ավիակիր ռազմանավերի վրա ծառայության անցնելու համար և հայտնվեց «Մանիլա Բեյ» ավիակիր անձնակազմում:

Փոլը պատմում է 1944 թվականի սեպտեմբերի 14-ին Փերլ Հարբորից իր նավարկության մասին, որը նպատակ ուներ ճակատամարտ տալ Լեյտի ծովածոցում՝ պատմության մեջ ամենամեծ ծովային ճակատամարտում: Նրա նավն ապահովում էր գեներալ Դուգլաս ՄակԱրթուրի զորքի ափհանումը Ֆիլիպինյան կղզիներ: Փոլն ու նրա զինակիցները չգիտեին, որ ճապոնացիները հսկայական նավատորմ էին ուղարկել, որպեսզի կասեցնեն ԱՄՆ զորքի առաջխաղացումը՝ հույս ունենալով, որ դա կփոխեր պատերազմի ընթացքը: Փոլի ավիակիրը կոչվում էր «Թաֆի-2»: Հյուսիսում հարձակման ենթարկվեց «Թաֆի-3»-ը՝ տալով բազմաթիվ զոհեր: Փոլի նավը խնայում էր տորպեդները և մեկը մյուսի հետևից ուղարկում իր օդանավերը՝ թշնամու նավատորմի վրա հարձակվելու համար: Նավը շարունակում էր մարտնչել, թեև հրամանատարը կարգադրել էր հեռանալ այդտեղից:

Ճապոնացիների հրամանատար, ծովակալ Տակեո Կուրիտան ուղղակի հրաշքով փոխում է որոշումը և «Մանիլա Բեյը» փրկվում է: Փոլը հպարտությամբ պատմում է, որ ճակատամարտում «Թաֆի-2»-ը «սպասարկեց 117 էյվենջեր, 87 Ուայլդքեթ, արձակեց 49 ականակիր, 76 տոննա ռումբ, 276 հրթիռ և հազարավոր գնդացրային համազարկեր: «Մանիլա Բեյի» ականակիրները գլխավոր նավերին հարվածեցին մեծ ճշգրի-

տությամբ: Նա մեջբերում է նաև ծովային ուժերի հրամանատար, ծովակալ Ֆելիքս Սթամփին. «Այնուամենայնիվ, պետք է ընդունել, որ մեր բախտը բերեց»:

Փոլը պատերազմից վերադարձավ Հարվարդի բիզնես դպրոց, որտեղ ստացավ մագիստրոսի աստիճան: Հենց այդտեղ էլ հանդիպեց իր կյանքի սիրուն՝ Նենսիին, որը Փոլի քույր Միգսի հետ սովորում էր Ուելսլիի քոլեջում: Փոլի ու Նենսիի կապն այնքան ամուր էր, որ ամուսնությունը հարատևեց 70 տարի: Նրանք 4 երեխա մեծացրին: Ամուսնության առաջին տարիներն անցել են Բոստոնում (Մասաչուսեթս): Այնտեղ Փոլն իր մտերիմ ընկերոջ՝ Հարի Հեյգի հետ հիմնեց «Հարբրիջ Հաուս» խորհրդատվական ընկերությունը, որը կոմերցիոն և պետական կազմակերպություններին առաջարկում էր քննադատական վերլուծություն: Մի բան, որ նրանք սովորել էին Հարվարդի բիզնես դպրոցում: Փոլը և Նենսին ոգևորված էին Բոստոնի համալսարանական ինտելեկտուալ էներգիայով:

Այս գրքում մեր հայրը շատ չի խոսում այն մասին, որ 8 տարի աշխատել է Պենտագոնում՝ նախագահներ Ջոն Քենեդու և Լինդոն Ջոնսոնի կառավարման օրոք: Այդ տարիները նրա կյանքի ամենանշանավոր ու ամենածանր շրջանն էին: Նա ու իր սերնդի առաջնորդները հաջողությունների հասան երկրորդ համաշխարհայինում հաղթանակից հետո միայն: Բայց Վիետնամը նրանցից խլեց բոլոր ռեսուրսները և, ի վերջո, Ամերիկայի համբերությունը: Փոլն ահռելի մեծ դեր է ունեցել պատերազմում: Որպես նախարարի օգնական, ապահովել է ավելի քան 500,000 զինվորի կարիքները: Նա մշակել է թիկունքային ծառայության հիմունքներն ու մեթոդները, դրանք

կյանքի է կոչել՝ ապահովելով աշխարհի մյուս կեսում գտնվող զորքի թիկունքը:

Փոլը հավատարիմ մնաց իր արժեքներին՝ ազնվությանն ու պարկեշտությանը: Ավելին, կառավարությունում Փոլը հանրային ծառայության կատարյալ օրինակ էր: Հենց այդ հատկանիշների շնորհիվ նա դարձավ ԱՄՆ նավատորմի նախարար և այդ պաշտոնում աշխատեց 1967-ի սեպտեմբերից մինչև 1969-ի հունվար: Ի պատիվ Փոլի ձեռքբերումների՝ ամերիկյան նավատորմը վերջերս նրա անունով կոչեց մի հրթիռային հածանավ: *USS Paul Ignatius-ը,* իր հրամանատարի խոսքով, ամերիկյան նավատորմի ամենաարդիական ու հզոր նավն է:

Փոլի հարուստ կենսագրության մասին շատերը գիտեն: Սակայն իր այս հուշագրությունից մի բան է ակնհայտ՝ նա ընտանիքի նվիրյալ էր: Այդ նվիրվածությունը շարունակվեց ամբողջ կյանքի ընթացքում և նպաստեց մեր՝ նրա երեխաների դաստիարակությանը:

Մեր ծնողները գերզբաղված էին, բայց նաև նվիրված էին մեզ, օգնում էին, որ յուրաքանչյուրը գտնի կյանքի իր ուղին (նույնիսկ եթե համաձայն չէին մեր ընտրության հետ): Նրանց սատարման ու շնորհած ազատության շնորհիվ ամեն մեկս գտավ իր կոչումը: Դեյվիդն ու Ադին լրագրողներ են: Դեյվիդը սյունակագիր է *Վաշինգտոն Պոստում* և 10 վեպի հեղինակ: Ադին «Հարվարդ բիզնես ռեվյուի» գլխավոր խմբագիրն է: Սառան ու Էմին ընտրեցին իրավաբանության ուղին: Սառան Հայագիտական ուսմանց և հետազոտությունների ազգային ընկերակցության գործադիր տնօրենն է: Էմին Նյու Հեմշիրի գերագույն դատարանի դատավոր է:

Չորսս էլ միշտ հպարտացել ենք մեր ծնողների ձեռքբերումներով, նրանց սերն ու աջակցությունն ավելի շատ զգացել ենք այն ժամանակ, երբ տատանվել ենք կամ սխալվել: Մենք հպարտ ենք, որ մեծացել ենք ինտելեկտուալ միջավայրում՝ ազնվորեն ու եռանդագին նվիրվելով հանրային ծառայությանը: Ու այս ամենը՝ երաժշտության հանդեպ սիրով և սուր հումորով համեմված: Հուսով ենք, որ մեր հոր *«Հիմա մասամբ գիտեմ»* հուշագրությունը բոլորին կօգնի հասկանալ այն հրաշալի ժամանակները, որոնք մենք ենք տեսել:

Դեյվիդ, Սառա, Էմի և Ադի Իգնեշիուսներ

Bookmark